1. Այս կյանքս պատերազմ է, և մենք՝ զինվորներ,
Մեղքի և սատանի դեմ կմարտնչինք:
Իրավ, խորամանկ են մեր թշնամիներ,
Բայց Քրիստոսի պես մենք զորապետ ունենք:

Կանգնի՛ր Հիսուսի համար, ով քրիստոնյա,
Քեզի համար Ինք համբերեց խաչին վրա,
Դուն ալ մի վախցիր, այլ Տերոջդ համար
Կանգնի՛ր և եղիր քաջ վկա:

2. Բաց է քեզի համար Աստծո զինարան,
Նա կը հագցնե քեզ Յուր արդարությամբ,
Գլխիդ կդնե սաղավարտ փրկության
Եվ մեջքդ կկապե Յուր ճշմարտությամբ:

3. Արթուն կենալով և աղոթք ընելով՝
Մեր բոլոր զենքերն կմնան միշտ փայլուն,
Եվ կաճենք օրեցօր Աստծո Խոսքով
Եվ Նրա շնորհքով կլինենք հաստատուն:

4. Անթիվ փորձություններ կան մեր ճանապարհին,
Սակայն ամենին Հիսուսով կհաղթենք,
Եվ Հորդանան գետից անցնելու պահին
Հիսուսին մեզ շատ մոտ կանգնած կտեսնենք:

Նոտաներ